

- 30 Որ մեղապարտ է նա գողէր,
Ի՛ արժան մահու իսկ տեսանէր,
Զայն համբուրեալ մեղայ՝ գոչէր,
Լայր եւ զըղջայր՝ զի անմեղն էր:
- 31 Թէպէտ Սարգսի տագնապ է՛ աքսոր
Վիշտ եւ չարիք վըտանգաւոր
Զ՞նա տանջեցին զերթ պարտաւոր,
Այլ գործեն արդ եւս պատուաւոր:
- 32 Անուն նորին համբաւաւոր,
Զոր առ յայտնել արատաւոր,
Զ՞նա վանէին իբր յանցաւոր,
Այժմ՝ հըռչակի եւս փառաւոր:
- 33 Եւ որ յանձանց նախանձաւոր
Խընդրիւր մընալ կալանաւոր
Ի բանտ ինչ գարշ եւ թիւնաւոր,
Արդ է նոցուն եւս մտաւոր:
- 34 Զոր եւ որպէս վըշտաց կ՞րաւոր
Ի՛ բսփոփանաց արժանաւոր
Սիրով յարգիւ առանձնաւոր
Պատուեն անձինք հազարաւոր:
- 35 Քանզի իշխանք առաջաւոր,
Եւ ամենայն ոք մասնաւոր,
Տեսեալ թէ է չէր նա բրձաւոր,
Գըտան նրմա նըպաստաւոր:
- 36 Որում նաեւ զարդիւնաւոր
Տուրս ընծայեն սրբաիւ բուր,
Առ լընուլ զիւր պէտս հարկաւոր
Որով լեալն էր պակասաւոր: